## Բ– Նախերգանք սբ՟յ մատենիս

Ի ժամանակս գերափառ արքային գագկայ. իսկ զա՟մ յաղթութե՟ բանս զոր արարեալ էր. թէ բարեգործութի՟ թէ պատերազմ. թէ եկեղեցիս հաստատել. և նոյնպէս պայծառացուցանել։ Արդ ի կատարել նորա զա՟մ յաղթութե՟ գործն. յատկապէս հարկեցոյց ի վ՟ր քարտուղի[1] իւրոյ. պահանջէ ի նմանէ զբանս պատմութե՟ ն՟ր արկանել ընդ գրով. ըստ նախնեաց առակին զոր առնէին հզօր արքայքն։ Իսկ անհուն գիտութի՟ն ամենազօրին ա՟յ՝ զոր տուեալ էր բանիբուն վ՟րդպտին մերոյ ս՟բյն Թօմայի, որ էր նոտար կամ գրագիր մեծին արքային գագկայ. սա սկսաւ զա՟մ գործս բարեպաշտ արքային[2] արկանել ընդ գրով։ Նախ շինեաց զանառիկ բերդն ճարայու. նոյնպէս շինեաց ամուր բերդ մի յոստան քաղ՟քին. զկնի սորա մեծ արքայն

արկան

Բ։ արկանէ զհզօր և յաղթութե՟ բազում իւր ի շինութի՟ն ամենազով սխրալի կզզոյն յաղթամարու. նա շինեաց մեծ եկեղեցի մի. անուն նորա Ս՟բ յարութի՟. նոյնպէս շինեաց զտաճարն յերկնահանգէտ շքեղաշուք. և յոյժ պանծալի զոր ոչ բաւէ ոք զպատմութի՟ն ն՟ր. արկանել ընդ գրով. և անուն տաճարին Ս՟բ խաչ յորջորջեալ. Մանավանդ զգալ տ՟ր զէւորք կ՟թկոսին. նա հաստատութի՟ն զոր արար զէւորք կ՟թկոս. Արդ յորդորեաց զթագաւորն և ասէ արքային պարտէ մեզ հաստատել զյաղթամ՟րն աթոռ ա՟մ հայոց. Նախ զի ամուր է յա՟մ կողմանց երկրորդ հայաստան է. երրորդ արքայարանն է արծրունեաց. Այսպիսի խանդաղատական բանիւք յորդորէ զարքայն

---

[1] = քարտուղարի

[2] Զ. տղմ.